ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՎԵՑԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել պարտադիր քննարկման ենթակա հետևյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	«Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին» հաղորդում	**287**-22.03.2018-ՊԻՄԻ
2.	«Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**288**-26.03.2018-ԱՀ,ԵԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
3.	«Հայաստանի Հանրապետության դատախազության 2017 թվականի գործունեության մասին» հաղորդում	**289**-29.03.2018-ՊԻՄԻ
4.	Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2017 թվականի տարեկան հաշվետվությունը	**291**-30.03.2018-ՖՎ
5.	Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի գործունեության մասին» հաղորդում	**292**-04.04.2018-ԳԿ
6.	«2017թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում	**295**-04.04.2018-ՊԻՄԻ

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ

գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած հետևյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ԱԺՈ-267-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին	Պ-**214**-14.12.2017,**05.03.2018**-ՊԻՄԻ-012/0 Հեղինակներ՝ Գալուստ Սահակյան, Ֆելիքս Ցոլակյան, Հակոբ Բեգլարյան, Կարինե Աճեմյան, Ալիկ Սարգսյան, Մուրադ Մուրադյան, Ռուզաննա Մուրադյան
2.	**ա)** «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին	Կ-**233**-22.12.2017-ՏՏԳԲ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	բ) «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասինե,	Կ-**233**[1]-22.12.2017-ՏՏԳԲ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	գ) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին	Կ-**233**[2]-22.12.2017-ՏՏԳԲ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	դ) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին	Կ-**233**[3]-22.12.2017-ՏՏԳԲ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	ե) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին	Կ-**233**[4]-22.12.2017-ՏՏԳԲ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
3.	«Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին	Պ-**266**-13.02.2018,**05.04.2018**-ԱՍ-011/0 Հեղինակներ՝ Հակոբ Հակոբյան, Աղվան Վարդանյան, Արսեն Միխայլով, Մարինա Մարգարյան, Մարգարիտ Եսայան, Ջեմմա Բաղդասարյան
4.	«Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի համար լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**283**-16.03.2018-ՖՎ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի վեցերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովների կողմից բացասական եզրակացություն ստացած, ինչպես նաև Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չստացած հետևյալ հարցերը.

Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**